ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023 թ. փետրվարի 15-ին, N30-Ա գ. Աշտարակ

ՆՈՐԱՅՐ ՄՅԱՍՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՇՂԱՐՇԻԿԻ Ա. ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 44-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2023 թվականի փետրվարի 14-ին կայացած մրցույթի արդյունքները և Ն. Մանուկյանի 2023 թվականի փետրվարի 15-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

Նորայր Մանուկյանին 2023 թվականի փետրվարի 16-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Շղարշիկի Ա.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/15/2023 15:32:15 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ